**Արձանագրություն N 2**

«Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի» կողմից **«ՀՀ Լոռու մարզի Մեծավանի թիվ 2 միջնակարգ դպրոցի կառուցման» աշխատանքների** գնման նպատակով կազմակերպված թիվ **ՀՏԶՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/121**ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

**«08» «նոյեմբերի» 2024թ.**

**2024 թվականի նոյեմբերի 08-ին ժամը 17:00**-ին տեղի ունեցավ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (գտնվելու վայր՝ ՀՀ ք. Երևան Կ. Ուլնեցի 31 հասցե, ՀՎՀՀ 0084644, էլեկտրոնային փոստ՝ atdf@atdf.am ) կողմից **«ՀՀ Լոռու մարզի Մեծավանի թիվ 2 միջնակարգ դպրոցի կառուցման» աշխատանքների** ձեռքբերման նպատակով կազմակերպված թիվ **ՀՏԶՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/121** ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը, որին ներկա էին Հանձնաժողովի 7 անդամները՝

***Հանձնաժողովի նախագահ***՝
Աշոտ Խաչատրյան
***անդամներ***՝
Խաչիկ Մարգարյան, Նշան Հակոբյան, Լիլիթ Պետրոսյան, Լուսինե Ղազարյան, Վարդինե Իսահակյան, Արմինե Մակարյան

Նիստը նախագահում էր **Աշոտ Խաչատրյանը**:
Քարտուղարությամբ՝ **Մարինե Բայյանի**:
Նախագահողը բացեց Հանձնաժողովի նիստը և հայտնեց, որ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 26-րդ կետի 2-րդ ենթակետի Հանձնաժողովի նիստն իրավազոր է, ներկայացրեց նիստի օրակարգը և առաջարկեց հաստատել այն.

**ՕՐԱԿԱՐԳ**

1. Ընթացակարգի պարզաբանման տեքստը հաստատելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Որոշվեց՝

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Ընթացակարգի պարզաբանման տեքստը հաստատելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

**1. Ընթացակարգի պարզաբանման տեքստը հաստատելու մասին**

Քննարկվեց Ընթացակարգի պարզաբանման տեքստը, որի արդյունքում, ղեկավարվելով Կարգի 14-րդ կետով.

Որոշվեց՝

1. Հաստատել Ընթացակարգի պարզաբանման տեքստը՝ համաձայն հավելվածի:

| | |
|---|---|
| ***Հանձնաժողովի նախագահ՝*** | |
| Աշոտ Խաչատրյան | |
| ***անդամներ՝*** | |
| Խաչիկ Մարգարյան | |
| Նշան Հակոբյան | |
| Լիլիթ Պետրոսյան | |
| Լուսինե Ղազարյան | |
| Վարդինե Իսահակյան | |
| Արմինե Մակարյան | |
| ***քարտուղար՝*** | |
| Մարինե Բայան | |

*Հավելված*

***ՀՏԶՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/121***
***ծածկագրով ընթացակարգի թիվ 2***
***արձանագրային որոշման***

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**հրավերի պարզաբանման մասին**

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2024 թվականի նոյեմբերի 08-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը **ՀՏԶՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/121**

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարիքների համար **«ՀՀ Լոռու մարզի Մեծավանի թիվ 2 միջնակարգ դպրոցի կառուցման» աշխատանքների** ձեռքբերման նպատակով կազմակերպված **ՀՏԶՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/121** ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2024 թվականի **նոյեմբերի 07**-ին ժամը՝ 11:06 ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ 2024 թվականի **նոյեմբերի 08**-ին տրամադրված պարզաբանումները՝

Հարցադրում N 1

«Հարգելի գործընկեր ՀՏԶՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/121 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու համար, խնդրում ենք պարզաբանել հետևյալը՝ քանի որ հրավերով սահմանված չէ տեղակապող կազմակերպության կողից ներկայացվող քաղաքաշինական փաստաթղթերի կազմում, բացառությամբ կոնստրուկտորական և ճարտարապետական մասերի պահանջներ ապա ինչ պայմաններ պետկ է բավարարի տեղակապող կազմակերպությունը»:

**Պարզաբանում**

. Ի պատասխան Ձեր հարցմանը տեղեկացվում է, որ ՀՏԶՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/121 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի համաաձայն մասնակիցը ներկայացնում է տեղակապում և հեղինակային հսկողություն իրականացնող անձի մասին տեղեկատվություն (1.5 հավելված), որին կից ի թիվս այլնի պետք է ներկայացնի տեղակապումն իրականացնող անձի **լիցենզիաները՝**

. Տեղակապող կազմակերպությունը համաձայն մրցույթի հրավերի պետք է ներկայացնի «քաղաքաշինական փաստաթղթերի կազմում՝ բացառությամբ կոնստրուկտորական և ճարտարապետական մասերի» հետևյալ լիցենզիաները
Տեղակապող կազմակերպություն, 1-ին դասի լիցենզիա,

- ջրամատակարարում և ջրահեռացում (ջրամատակարարման և ջրահեռացման ներքին և արտաքին ցանցեր, հիդրոմելորացիա) 1-ին կարգի հավաստագիր-հավաստագիր

- էլեկտրամատակարարում (էլեկտրամատակարարման, էլեկտրալուսա-վորման ներքին և արտաքին ցանցեր, էլեկտրամատակարարման համակարգեր, ֆոտովոլտային և հողմաէներգետիկ կայաններ) 1-ին կարգի հավաստագիր-հավաստագիր
- ջերմագազա-մատակարարում և օդափոխություն (օդափոխության, ջեռուցման և օդի լավորակման համակարգեր, ջերմամատա-կարարաման և գազամատա-կարարաման համակարգեր) 1-ին կարգի հավաստագիր-հավաստագիր

. Ինչպես նաև անհրաժեշտ է ներկայացնել ճարտարապետի և կոնտսրուկտորի արտոնագրեր:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել **ՀՏԶՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/121** ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Մարինե Բալյանին:

Հեռախոս՝ +374 60 501 560 +136:
էլեկտրանային փոստ՝ m.balyan@atdf.am :

**ОБЪЯВЛЕНИЕ**

**о разъяснении приглашения**

Настоящий текст объявления утвержден решением Оценочной комиссии

№2 от 08-го ноября 2024 года

и опубликовывается

в соответствии со статьей 29 Закона Республики Армения "О закупках"

Код процедуры **HTZH-DBM-AShDzB-2024/121**

Оценочная комиссия процедуры закупки под кодом **HTZH-DBM-AShDzB-2024/126**, организованной с целью приобретения работ **«Строительство средней школы №2 села Мецаван в области Лори РА (далее-Процедура)**, ниже представляет запросы, полученные 07-го ноября  время: 11:06 2024 года и предоставленные 08-го ноября 2024 года по ним разъяснения относительно приглашения по тому же коду:

**Запрос № 1**

“Уважаемый партнер, для участия в процедуре закупки по коду ХТЖ-ДБМ-АШДЗБ-2024/121 просим уточнить следующее: поскольку в приглашении не указаны градостроительные документы, которые должны быть представлены местной организацией, за исключением требования к структурным и архитектурным частям, то каким условиям должна соответствовать местная организация?.”

**Разъяснение**
. В ответ на Ваш запрос сообщаем, что согласно приглашению на процедуру закупки с кодом HTDF-DBM-ASZB-2024/121 участник передает информацию о лице, осуществляющем перелинковку и контроль авторских прав (приложение 1.5), в которому, помимо прочего, он должен предоставить лицензии лица, осуществляющего перелинковку"

.Согласно тендерному приглашению принимающая организация должна представить

следующие лицензии на «составление градостроительной документации, за исключением конструктивных и архитектурных частей».

Местная организация, лицензия 1-го класса,

" водоснабжения и водоотведения (внутренние и наружные сети водоснабжения и водоотведения, гидромелорация) аттестат-удостоверение 1 класса

" электроснабжение (внутренние и наружные сети электроснабжения, электроосвещения, системы электроснабжения, фотоэлектрические и ветроэнергетические установки) сертификат-удостоверение 1 класса

" теплогазоснабжения и вентиляции (системы вентиляции, отопления и качества воздуха, термогазоотопительные и газоотопительные системы) сертификат-удостоверение 1 класса

Также необходимо предоставить лицензии архитектора и подрядчика.

Для получения дополнительной информации, связанной с настоящим объявлением, можно обратиться к секретарю Оценочной комиссии Марине Балян под кодом **HTZH-DBM-AShDzB-2024/121**Телефон: +374 60 501 560 +136.

Электронная почта: m.balyan@atdf.am